№ 34 ՀԻՆԳՇԱԲԹԻ ՄԱՐՏԻ 23 **1895** ՀԻՆԳՇԱԲԹԻ ՄԱՐՏԻ 23 № 34

ՔՍԱՆԵՐԵՔԵՐՈՐԴ ՏԱՐԻ

Տարեկան գինը 10 ռուբլի, կէս տարվանը 6 ռուբ.
Առանձին համարները 7 կոպէկով.

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ.

Մեր հասցէն. Тифлисъ. Редакція «Мшакъ».
կամ Tiflis. Rédaction «Mschak».

Տէլէֆօն № 253.

ՄՇԱԿ

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի և տօն օրերից)

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով.

Յայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր բառին 2 կոպէկ.

Տէլէֆօն № 253.

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ՆԵՐԿԱՅ **1895** ԹԻԱԿԱՆԻՆ

„ՄՇԱԿ“

ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԼՐԱԳՐԻ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆԸ ՇԱՐՈՒՆԱԿՎՈՒՄ Է

«ՄՇԱԿԻ» տարեկան գինը՝ թէ Ռուսաստանում և թէ Արտասահմանում 10 ռուբլի, տասն և մէկ և տասն ամսվանը՝ 9 ռ., ինն և ութ ամսվանը՝ 8 ռ., եօթ ամսվանը՝ 7 ռ., վեց ամսվանը՝ 6 ռ., հինգ ամսվանը՝ 5 ռ., չորս ամսվանը՝ 4 ռ., երեք ամսվանը՝ 3 ռ., երկու ամսվանը 2 ռ., ամսական 1 ռուբլի։

Գրվել «ՄՇԱԿԻՆ» կարելի է ԽՄԲԱԳՐԱՏԱՆԸ։ Օտարաքաղաքացիները պէտք է դիմեն հետևեալ հասցէով՝ Тифлисъ. Редакція «МШАКЪ»։ Իսկ արտասահմանից՝ Tiflis. Rédaction «MSCHAK»։

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Ինտելիգենցիա չը կայ. Հայոց հարցը անգլիական պարլամենտում. Հայոց հարցը և եւրօպական մամուլը. Մի նոր վարձկան թղթակից. Համիդէյի զորքը.—ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Արբեցողութիւնը տարածվում է գիւղերում թէ ոչ. Մատենագրութիւն. Նամակ Մոսկվայից. Ներքին լուրեր.—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Անգլիա և Կիպրոս կղզին. Նամակ Աւստրիայից. Նամակ Թիւրքիայից. Արտաքին լուրեր.—ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ.—ՀԵՌԱԳԻՐՆԵՐ.—ԲՕՐՍԱ.—ՑԱՑՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.—ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. Ականատեսի պատմածը.

ԻՆՏԵԼԻԳԵՆՑԻԱ ՉԸ ԿԱՑ

—

Ստամբուլը, որ երբեմն բիւզանդական մտքի հնոցն էր, այժմ դարձել է մի չինական պատ, որ արգելում ու թոյլ չէ տալիս, որ եւրօպական քաղաքակրթութեան ալիքները ներս թափանցեն դէպի Փոքր-Ասիայի խորքերը, դէպի Հայաստանի դաւառները, ուր ապրում է մի ժողովուրդ, ընդունակ կուլտուրայի, սիրահար քաղաքակրթութեան, և ձգտող դէպի մտաւոր և բարոյական վերածնութիւն։

Դա արտաքին արգելքն է։

Իսկ միւս կողմից, նոյն իսկ երկրի ներսը, նոյն իսկ Փոքր-Ասիայի մէջ, յատկապէս Հայաստանի դաւառներում, չը կայ այն ներքին ոյժը, այն խթանը, որ պէտք է պատուաստէր ժողովրդին և երկրին ժամանակակից քաղաքակրթութեան արդիւնքները, որ պէտք է ստանձնէր ժողովրդի մտաւոր և բարոյական ղեկավարի դերը։

Այդ ներքին ոյժը, այդ խթանը—ինտելիգենցիան է, որ չը կայ Թիւրքաց Հայաստանում և ոչ էլ նոյն իսկ ամբողջ Փոքր-Ասիայում, ուր միլիոնաւոր ազգաբնակութիւնը կարօտ է ինտելիգենտ, մտաւորապէս բարձր կանգնած՝ կրթող տարրի օգնութեան և աջակցութեան։

Այն ինտելիգենտ հոսանքը, որ սկսվեց սրանից տասն, տասնհինգ տարի առաջ դէպի Թիւրքաց Հայաստան, այն շարժումը, որ առաջ եկաւ այն ժամանակ դպրոցական գործերում, մի խօսքով այն ոգեւորութիւնը, որ բռնկվեց շատ տարիներ առաջ, նպատակ ունենալով մտաւորապէս կրթել խաւար, տգէտ, անգրագէտ ժողովրդին,—այժմ այլ ևս չը կայ։

Վերջին մի քանի տարիների ընթացքում ինտելիգենտ ոյժերը, դպրոցների թիւը ոչ թէ միայն չէ աւելացել Փոքր-Ասիայի հայաբնակ կենտրոններում, այլ, ընդհակառակն, բոլորովին պակասել և նոյն իսկ ցամաքել է, քանի որ ինտելիգենտ մարդիկ սիստեմատիկաբար հալածվում են այդ երկրից, քշվում են երկրից դուրս, իբրև վնասակար, իբրև վտանգաւոր տարր։

Թիւրք ինտելիգենցիա Փոքր-Ասիայում չը կայ. մահմէտական թիւրք հասարակութիւնը դեռ այն աստիճանի մեռած, քնած է, որ անկարող է արտադրել իրանից որ և է ինտելիգենտ տարր, որ և է ինտելիգենտ շարժում։ Խօսել, ի հարկէ, քիւրդերի, ասորիների, եզիդիների մասին, որոնք հայերի հետ խառն են բնակվում Հայաստանում, միամտութիւն կը լինէր։

Մնում են ուրեմն միայն հայերը, որոնք կարող էին երկրի մէջ ստեղծել ինտելիգենցիա, և առաջ բերել քաղաքակրթութեան հոսանք,—բայց, տարաբաղդաբար, հայերին էլ թոյլ չէ տրվում զբաղվել ինտելիգենտ, մտաւոր գործունէութեամբ, թոյլ չէ տրվում դպրոցներ բանալ, լրագիր հիմնել, որ և է հասարակական գործի ձեռնամուխ լինել.—և ահա այդ պատճառով, այսօր ամբողջ Փոքր-Ասիան, և նրա հետ Թիւրքաց Հայաստանը մեզ ներկայացնում են մի տխուր պատկեր.—մի թշուառ երկիր, ուր չը կայ ինտելիգենցիա, ուր չը կայ մտաւոր հոսանք։

ՀԱՑՈՑ ՀԱՐՑԸ ԱՆԳԼԻԱԿԱՆ ՊԱՐԼԱՄԵՆՏՈՒՄ

—

Մարտի $^{9}/_{21}$-ին, անգլիական համայնքների ժողովում, պարլամենտի անդամ Մ. Շըվանն Մանչեստրի մեթոդիստների երեք եկեղեցիների կողմից մի յայտագիր ներկայացրեց կառավարութեանը, պահանջելով անյապաղ միջոցներ ձեռք առնել՝ դադարեցնելու համար Թիւրքիայի հայ ազգաբնակութեան դէմ գործադրվող բռնութիւնները։ Ապա Մ. Շվանն հարցապնդում արեց կառավարութեանը, թէ արդեօք ուշադրութիւն է դարձված վիճենայից, մարտի 16-ից ստացված և „Daily Telegraph„ լրագրում տպված այն հեռագրի վրա, որի մէջ ասված է, թէ դաւադրութեան մէջ սուտ մեղադրված և Ամասիայի բանտից արձակված 150 հայերին Բէկիր-փաշա նահանգապետը, զանազան պատրուակներով, կրկին բանտարկել է։ Եթէ կառավարութիւնը ապացոյցներ կունենայ իր ձեռքում, որ այդ փաստը ճիշդ է, արդեօք կը պնդի, որ Բէքիր-փաշան արձակվի իր պաշտօնից։

Սըր Էդուարդ Գրէյ պատասխանեց, որ Ամասիայի մուլթեսարիֆ Բէքիր-փաշան նշանակված է այդ պաշտօնում անցեալ տարվայ դարնանը Նախկին մուլթեսարիֆի տեղ, որին Թիւրքաց կառավարութիւնը արձակեց հէնց բազմաթիւ կալանաւորութիւններ կատարելու պատճառով։ Նոյեմբեր ամսին համարեա բոլոր բանտարկեալները ազատութիւն ստացան։ Այդ տեղեկութիւնը, որի մասին խօսում է համայնքների ժողովի պատուելի անդամը, կուղարկվի, քննութեան համար, կ. Պոլիս, անգլիական դեսպանին։

Մ. Շվանն հարցապնդում արեց կառավարութեանը, թէ արդեօք նա հրաւիրել է Ռուսաստանի և Ֆրանսիայի կառաւարութիւններին համերաշխ կերպով գործելու, որպէս զի անյապաղ և վերջնականապէս դադարեցնվեն այն սպանութիւնները, որ շարունակում են կատարել Թիւրքիայի ագենտները Փոքր-Ասիայում և որոնց շատ օրինակներ բերում է "Daily Telegraph„ լրագրի թղթակիցը, մարտի 18-ի համարում, Խնուսաբերդից ուղարկված թղթակցութեան մէջ։

Նախ քան թողնելու, որ պատասխանէր սըր Էդուարդ Գրէյ, տեղից վերկացաւ ընթերցողներին յայտնի Թիւրքասէր Աշմէտ Բարալէտ։

"Ես կը ցանկայի իմանալ, ասեց նա,—արդեօք իրաւունք ունէր համայնքների ժողովի անդամ Մ. Շվանն հարց յարուցանել այստեղ այն բարբարոսական գործողութիւնների մասին, որ վերագրվում են մեր մի բարեկամ պետութեան ագենտներին։„

Պատասխանելով Մ. Շվանի հարցապնդումին, սըր Էդուարդ Գրէյ նկատեց, որ Հայաստանի ծանր դրութեան մասին կառավարութիւնը, հիւպատոսական զեկուցումների հիման վրա, առանձին առաջադրութիւն արեց Բ. Դրանը։ "Ես կարող եմ հաւատացնել իմ պատուելի բարեկամին,—աւելացրեց սըր Էդ. Գրէյ,—որ նորին մեծութեան կառավարութիւնը ոչ մի ջանքեր չի խնայի ուրիշ պետութիւնների գործակցութիւնը ձեռք բերելու և Հայաստանի վարչութեան մէջ բէֆօրմներ մտցնելու համար։„

Թիւրքասէր Բարալէտ կրկին տեղից վերկացաւ և հարց առաջարկեց սըր Էդ. Գրէյին, թէ կարող է արդեօք նա հաստատել, որ եւրօպական ուրիշ պետութիւնները, որպէս Գերմանիան, Աւստրիան և Իտալիան հրաժարվեցին Բ. Դրան վրա ճնշում գործ դնելուց և եթէ այո, ուրեմն ի՞նչու են նրանք հրաժարվում։ Այդ հարցապնդումներ են հետևեալ գիւղերը՝ Խթան, Հեթինք և Գիբրալ։ Մեր Աղբի գիւղը բաղկացած է եօթանասուն տնից։ Այժմ այդտեղ չէ մնացել ոչ մի անձն, ոչ մի տուն անդամ։ Ամեն բան փչացած է, ժողովուրդը բոլորը կոտորված է, բացի երեք ընտանիքներից։ Մեր ընտանիքը բաղկացած էր ինն հոգուց։ Իմ հայրը գիւղի գլխաւոր մարդն էր։ Մեր ընտանիքում չորս տղամարդ կար, հայրս ամենից ուժեղն էր և մեր ընդհարումի միջոցին նա գլուխ էր կանգնած։

Գայմագամի հրամանով՝ Սասունի վրա արշաւեցին քիւրդեր, որոնք իբրև գայլեր յարձակվեցին մեզ վրա, բայց մեզ չը կարողացան յաղթել։ Ոչ մի այն տղամարդիկս էինք մասնակցում կռվին, այլ և կանայք և ծեր մարդիկ։ Օրինակ իմ մայրը, փեշերը հաւաքած, զինված, համարձակ օգնում էր մեզ քիւրդերի դէմ կռուելու։ Կռիւը շարունակվեց քսան և մէկ օր. մենք կոտորում էինք, մեզ էլ կոտորում էին։ Բայց մենք չէինք յետ նահանջում կամ փախչում։

«Երբ քիւրդերի կոտորվելը յայտնի դարձաւ վալիին և գայմագամին, նրանք ուղարկեցին կանոնաւոր զօրք։ Որչափ էին նրանք՝ ես չը գիտեմ, գուցէ հինգ հազար, գուցէ քսան հազար։ Բայց միայն մի բան գիտեմ, որ ամեն տեղ միայն զինւոր էիր տեսնում։ Նրանք բերին թնդանօթներ և սկսեցին արձակել։ Դրանից առաջ մենք ոչ տեսել էինք թնդանօթներ, ոչ էլ լսել նրանց մասին։ Նրանց ձայնից կանայք սարսափում էին. թնդանօթի գնդակները տարածում էին ամեն տեղ սարսափ, մահ և աւերում։

«Մենք փախանք և որոնեցինք պատսպարան մեր ժայռերի և այրերի մէջ, բայց գնդակները շարունակում էին հարվածել թէ քարերին, թէ մարդկանց։ Մեր տների հրդեհների ծուխը և բոցը հասնում էին մինչև մեր այրերը։

«Այդ ժամանակ սարերը բարձրացան համիդիէյի գնդապետները և զիտակները իրանց ձեռքին՝ խուզարկում էին սարերը և եթէ մի մարդու գլուխ էին նկատում քարի յետևից, իսկոյն պատւիրում էին հեծելազնդին այն կողմը շտապել և ձիաւորները սպանում էին ամենին, ով նրանց ձեռքն էր ընկնում, առանց հասակ և սեռ զանազանելու։ Զոհերի գլուխները ներկայացվում էին գընդապետներին իբրև տրոֆէյներ, աւար։ Բայց այրերում մնալն էր դժուար էր, որովհետև պաշար չունէինք. մարդիկ ամենամեծ զգուշութիւններով գնացին գիւղերը գլդել ճարելու։

«Քիւրդերը սարսափելի անգթութիւններ արին։ Նրանք հաճութիւն չէին զգում հասակաւոր մարդկանց սպանելուց։ Նրանք որոնում էին մանուկներին, գլորում գետնին և կոխում դաշոյնները նրանց մարմինները։ Ցեսոյ բարձրացնում էին օդի մէջ, շուռ տալիս դաշոյնները նրանց մարմինների մէջ և զցում քարերի վրա ասելով. «Որ մեծանայիք, պէտք է մեզ հետ կռուէիք, ջահանամը կորէք»։ Եւ կոխոտում էին նրանց մարմինները իրանց ոտների տակ։

«Քիւրդերը հետևում էին ինձ սպանելու համար, որովհետև գիտէին, որ ես էլ նրանց ներսը չէի։ Մենք, ես և իմ ընկերակիցներս, վճռեցինք փախչել Ռուսաստան։ Սասունից մենք փախանք և հասանք անտառը։ Անտառում մենք լսեցինք ծանր և սրտամաշ հառաչանք։ Գնալով ձայնի կողմը՝ մենք տեսանք խթանցի Միրոյին, որի բերանից արիւն էր հոսում։ Մենք սարսափեցինք։ Մենք վերցրինք նրան և տարանք մեզ հետ մինչև գլգելի արտերը. բայց քիւրդերը մեզ տեսան և ընկան մեր ետևից։ Այն ժամանակ մենք համբուրեցինք մեր մեռնող երկրացու ճակատը և փախանք։ Քիւրդերը վերցրին Միրոյին, կտոր կտոր արին և այրեցին։

«Իմ հօրեղբայրը կռուի ժամանակ սպանվեց։ Մեր ընտանիքի միւս անդամները մնացին այրում, որ գտնվում էր այնպիսի դժուար մի տեղում, ուր հասնելու համար մէկը միւսի վրա էին բարձրանում։ Իմ ընկերակից Աւետիսը ունէր հինգ հօրեղբայր, որոնցից Ղազօն և Խաչօն սպանվեցին։ Մկրտչի ընտանիքից երեք հոգի սպանվեցին, Կրպէի հօրեղբայր Աւօն էլ սպանվեց։ Եթէ կամենում էք, կարող եմ ձեզ մի առ մի թվել բոլոր սպանվածների անունները, այլ և այն, թէ որքան անասուն է քշած տարած մեր գիւղից։

«Հինգ օր գնալուց յետոյ մենք հասանք Իզիզ գիւղը և յետոյ Էդէնթափ։ Մենք վեց հոգի էինք և ուրիշ չոր էինք հագել, այն է Մուշի բաճկոններ և գտակներ։ Եթէ մենք հագած լինէինք սասունի աբան և սասունի գտակներ, քիւրդերը մեզ կը ճանաչէին և մեզ էլ կը սպանէին։»

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

—

ԱԿԱՆԱՏԵՍԻ ՊԱՏՄԱԾԸ

—

«Բէյտէրի գործակալութիւնը», որ մինչև այժմ աշխատում էր ամեն բան Թիւրքական տեսակէտից լուսաբանել, այժմ ստիպված է զգում իրան մի քանի ճշմարտութիւններ խոստովանել։ Անգլիական լրագիրների, ինչպէս, օրինակ, «Standart», «Dily News» լրագիրների մարտի 18-ի համարներում հրատարակված է այդ գործակալութեան Կարսից, սեփական թղթակցից ստացած մի թղթակցութիւն, որի բովանդակութիւնը հետևեալն է։

—

«Այստեղ, Կարս, Սասունից եկել է մի փախստական հայ, անցնելով բազմաթիւ վտանգների և արգելքների միջով։ Նրա անունը Մարտօ է. նա մի հովիւ է, քսան տարեկան։ Խօսում էր Սասունի սարսափների մասին բարկութեամբ լի աչքերով, բայց այնքան պարզ, հասարակ և անպաճոյճ, որ լողի վրա մեծ տպաւորութիւն էր թողնում։

«Ես կը հաղորդեմ նրա խօսքերը այն ձևով, ինչպէս դուրս եկաւ նրա շրթունքներից։ Ահա նրա պատմածը։

«Իմ անունը Մարտօ է։ Ես Ստեփանի որդին եմ։ Մեր ազգանունն է Մելքօ (Մելքոյեան)։ Մեր գիւղն է Աղբի (Աղբիկ կամ Աղբինք)։ Մեր գիւղի մօտ են հետևեալ գիւղերը՝ Խթան, Հեթինք և Գիբրալ։ Մեր Աղբի գիւղը բաղկացած է եօթանասուն տնից։ Այժմ այդտեղ չէ մնացել ոչ մի անձն, ոչ մի տուն անդամ։ Ամեն բան փչացած է, ժողովուրդը բոլորը կոտորված է, բացի երեք ընտանիքներից։ Մեր ընտանիքը բաղկացած էր ինն հոգուց։ Իմ հայրը գիւղի գլխաւոր մարդն էր։ Մեր ընտանիքում չորս տղամարդ կար, հայրս ամենից ուժեղն էր և մեր ընդհարումի միջոցին նա գլուխ էր կանգնած։

Գայմագամի հրամանով՝ Սասունի վրա արշաւեցին քիւրդեր, որոնք իբրև գայլեր յարձակվեցին մեզ վրա, բայց մեզ չը կարողացան յաղթել։ Ոչ միայն տղամարդիկս էինք մասնակցում կռվին, այլ և կանայք և ծեր մարդիկ։ Օրինակ իմ մայրը, փեշերը հաւաքած, զինված, համարձակ օգնում էր մեզ քիւրդերի դէմ կռուելու։ Կռիւը շարունակվեց քսան և մէկ օր. մենք կոտորում էինք, մեզ էլ կոտորում էին։ Բայց մենք չէինք յետ նահանջում կամ փախչում։

«Երբ քիւրդերի կոտորվելը յայտնի դարձաւ վալիին և գայմագամին, նրանք ուղարկեցին կանոնաւոր զօրք։ Որչափ էին նրանք՝ ես չը գիտեմ, գուցէ հինգ հազար, գուցէ քսան հազար։ Բայց միայն մի բան գիտեմ, որ ամեն տեղ միայն զինւոր էիր տեսնում։ Նրանք բերին թնդանօթներ և սկսեցին արձակել։ Դրանից առաջ մենք ոչ տեսել էինք թնդանօթներ, ոչ էլ լսել նրանց մասին։ Նրանց ձայնից կանայք սարսափում էին. թնդանօթի գնդակները տարածում էին ամեն տեղ սարսափ, մահ և աւերում։

«Մենք փախանք և որոնեցինք պատսպարան մեր ժայռերի և այրերի մէջ, բայց գնդակները շարունակում էին հարվածել թէ քարերին, թէ մարդկանց։ Մեր տների հրդեհների ծուխը և բոցը հասնում էին մինչև մեր այրերը։

«Այդ ժամանակ սարերը բարձրացան համիդիէյի գնդապետները և զիտակները իրանց ձեռքին՝ խուզարկում էին սարերը և եթէ մի մարդու գլուխ էին նկատում քարի յետևից, իսկոյն պատւիրում էին հեծելազնդին այն կողմը շտապել և ձիաւորները սպանում էին ամենին, ով նրանց ձեռքն էր ընկնում, առանց հասակ և սեռ զանազանելու։ Զոհերի գլուխները ներկայացվում էին գընդապետներին իբրև տրոֆէյներ, աւար։ Բայց այրերում մնալն էր դժուար էր, որովհետև պաշար չունէինք. մարդիկ ամենամեծ զգուշութիւններով գնացին գիւղերը գլդել ճարելու։

«Քիւրդերը սարսափելի անգթութիւններ արին։ Նրանք հաճութիւն չէին զգում հասակաւոր մարդկանց սպանելուց։ Նրանք որոնում էին մանուկներին, գլորում գետնին և կոխում դաշոյնները նրանց մարմինները։ Ցեսոյ բարձրացնում էին օդի մէջ, շուռ տալիս դաշոյնները նրանց մարմինների մէջ և զցում քարերի վրա ասելով. «Որ մեծանայիք, պէտք է մեզ հետ կռուէիք, ջահանամը կորէք»։ Եւ կոխոտում էին նրանց մարմինները իրանց ոտների տակ։

«Քիւրդերը հետևում էին ինձ սպանելու համար, որովհետև գիտէին, որ ես էլ նրանց ներսը չէի։ Մենք, ես և իմ ընկերակիցներս, վճռեցինք փախչել Ռուսաստան։ Սասունից մենք փախանք և հասանք անտառը։ Անտառում մենք լսեցինք ծանր և սրտամաշ հառաչանք։ Գնալով ձայնի կողմը՝ մենք տեսանք խթանցի Միրոյին, որի բերանից արիւն էր հոսում։ Մենք սարսափեցինք։ Մենք վերցրինք նրան և տարանք մեզ հետ մինչև գլգելի արտերը. բայց քիւրդերը մեզ տեսան և ընկան մեր ետևից։ Այն ժամանակ մենք համբուրեցինք մեր մեռնող երկրացու ճակատը և փախանք։ Քիւրդերը վերցրին Միրոյին, կտոր կտոր արին և այրեցին։

«Իմ հօրեղբայրը կռուի ժամանակ սպանվեց։ Մեր ընտանիքի միւս անդամները մնացին այրում, որ գտնվում էր այնպիսի դժուար մի տեղում, ուր հասնելու համար մէկը միւսի վրա էին բարձրանում։ Իմ ընկերակից Աւետիսը ունէր հինգ հօրեղբայր, որոնցից Ղազօն և Խաչօն սպանվեցին։ Մկրտչի ընտանիքից երեք հոգի սպանվեցին, Կրպէի հօրեղբայր Աւօն էլ սպանվեց։ Եթէ կամենում էք, կարող եմ ձեզ մի առ մի թվել բոլոր սպանվածների անունները, այլ և այն, թէ որքան անասուն է քշած տարած մեր գիւղից։

«Հինգ օր գնալուց յետոյ մենք հասանք Իզիզ գիւղը և յետոյ Էդէնթափ։ Մենք վեց հոգի էինք և ուրիշ չոր էինք հագել, այն է Մուշի բաճկոններ և գտակներ։ Եթէ մենք հագած լինէինք սասունի աբան և սասունի գտակներ, քիւրդերը մեզ կը ճանաչէին և մեզ էլ կը սպանէին։»

ման հետևանքն այն էր, որ համայնքների ժողովի նախագահը (սպիկէր) կարգի հըրաւիրեց չափազանց թիւրքասիրութիւն ցոյց տուող պարոնին։

ՀԱՅՈՑ ՀԱՐՑԸ ԵՒ ԵՒՐՈՊԱԿԱՆ ՄԱՄՈՒԼԸ

I

Լօնդօնի «Christian Commonwealth» լրագիրը իր մարտի 14-ի համարում ասում է հետևեալը.

«Այժմ ոչ ոքի, նոյն իսկ ամենաթիւրքամոլ մարդկանց համար կասկած չը մնաց, որ Հայաստանից եկած տխուր տեղեկութիւնները բոլորովին ճիշդ են։ «Daily Telegraph» լրագիրը այժմ նոյն դերն է կատարում, ինչ որ տարիներից առաջ «Daily News» լրագիրը։ Այն զայրոյթը, որ այն ժամանակ առաջ եկաւ Ռուսաստանում և Անգլիայում դէպի Թիւրքերի արարքը, անմոռանալի կը դարձնեն «Daily News» լրագրի արած ծառայութիւնը։ Այժմ նոյնը անում է «Daily Telegraph» լրագիրը, որ ուղարկել է իր յատուկ գործակալին սարսափների տեղը։

«Միջազգային յանձնաժողովը միայն մի ֆարս է, որից բրիտանական կառավարութիւնը, ինչպէս և այլ կառավարութիւնները, պէտք է սաստիկ ամօթահար լինեն։ Խելքից դուրս մի բան է, որ յանձնաժողովի անդամներից ոչ ոք չէ կարողանում հայ վկաներին հասկանալ։ Նոյն իսկ անգլիական պարլամէնտում լսվեցին բամբասանքներ և ինսինուացիաներ։

«Մեր կառավարութիւնը չէ կամենում կատարել իր պարտաւորութիւնը և կոյր է ձևանում թիւրքական գազանութեան և կամայականութեան առաջ։ «Daily Telegraph» լրագրի թղթակիցը կարողանում է հասկանալ Փոքր-Ասիայի բարբարոսները և նրա նամակները սարսափեցուցիչ են։ Մարդ չէ կարողանում հաւատալ, թէ այդ բոլորը կատարվել է։ Եթէ այդպէս է, ուրեմն Սասունում աւելի վատ գործ է կատարվել, քան թէ Բալքանում։ Ի՞նչ է մտածում լորդ Կիմբերլէյ։ Եւ ի՞նչ է մտադիր անել արտաքին գործերի մինիստրութիւնը»։

II

Ֆրանսիական «Gazette de Lauzanne» լրագիրը «Հայաստանի գազանութիւնները» վերնագրով մի ընդարձակ յօդուածի մէջ խօսելով Լօնդոնի լրագրի արած մերկացումների մասին, վերջացնում է իր յօդուածը հետևեալ կծու և հեգնական խօսքերով.

«Թղթակցի պատմածը Սասունի սարսափելի պատմութեան հաղարաւոր էպիզոդներից մինն է։ Բայց պէտք է լռել այդ բաների մասին։ Նրանք կարող են վնասել «օսմանեան կայսրութեան ամբողջութեան», եւրոպական դիպլոմատիայի այն նուիրական սկզբունքին, որի համար հարիւր հազար ֆրանսիացիներ և անգլիացիներ թողել են իրանց ոսկորները Կրիմում, և որի համար անգլիական նաւատորմը գնաց աղատելու Դարդանելը, լորդ Բիկոնսֆիլդի հրամանով, երբ Ցարի զորքը, ս. Սոֆիայի առաջ, վտանգի մէջ էր դրել Թիւրքաց տիրապետութիւնը»։

III

Անգլիական «Central News» լրագիրը հաղորդում է, որ մարտի 6-ին Բուխարեստից եկաւ Լօնդոն Անգլո-Հայկական ընկերութեան նախագահ Ստիվենսոնի մօտ մի յատուկ պատգամաւոր, որը 1000 ֆունտ ստերլինգ բերեց նրան ընկերութեան պէտքերի համար, նոյնպէս մեծ նշանակութիւն ունեցող շատ գաղտնիներ, որոնք վերաբերում են Սասունի անցքերին և մի չնորհակալութեան ուղերձ Ստիվենսոնին՝ նրա աշխատութիւնների և հոգածութիւնների համար ի նպաստ թշուառ հայերի։

IV

Անգլիական «Daily News» լրագիրը հաղորդում է, որ Մուշի քննիչ յանձնաժողովին մասնակցող օսմանեան կոմիսարները առաջարկեցին այդ յանձնաժողովը Մուշից Բիթլիս տեղափոխել, որպէս աւելի հեռու մի տեղ՝ տեղի ունեցած անցքերից և կոտորածից, այն պատրուակով, թէ իրանք հարկաւոր են համարում քննութեան ենթարկել Բիթլիսում ապրող մի քանի վկաների։ Բրիտանական, ֆրանսիական և ռուսաց լիազօրները դիմադրեցին այդ առաջարկութեանը և այդ պատճառով յանձնաժողովը մնաց Մուշում և վկաները Բիթլիսից կանչվեցին՝ ցուցմունքներ տալու համար»։

V

Ֆրանսիական «Temps» լրագիրը հաղորդում է, թէ անգլիական լրագիրներին Կ. Պոլսից հեռագրում են, որ սուլթանը հրամայել է արձակել այն բոլոր հայ հոգևորականներին, որոնք քաղաքական պատճառներով բանտարկված էին օսմանեան կայսրութեան զանազան մասերում։ Սուլթանի այդ հրամանը շատ լաւ տպաւորութիւն գործեց։ Անգլիական դեսպան սըր Ֆիլիպ Կէրրի իր կառավարութիւնից հրահանգներ ստացաւ հարկադրիչ առաջադրութիւններ անել բանտարկված հայ քահանաներին արձակելու առիթով։ Մեծ վիշտը հէնց որ իմացաւ, թէ սուլթանը դիտաւորութիւն ունի ներումն չնորհել հայ քահանաներին, անյապաղ հաղորդեց այդ լուրը անգլիական դեսպանին։ Դրանից յետոյ անգլիական դեսպանը մի շատ երկարատև տեսակցութիւն ունեցաւ սուլթանի հետ, որի ժամանակ խօսակցութեան առարկան հայկական գործերն էին։ Ունկնդրութիւնը երկու ժամ տևեց։

VI

Վիէննայից «Ռէյտերի գործակալութիւնը» հեռագրում է, մարտի 16-ից, անգլիական լրագիրներին հետևեալը.

«Կ. Պոլսից, մարտի 13-ից ստացած հեռագիրները ցոյց են տալիս, որ Մուշում գործերի դրութիւնը անբաւարար է։ Ամեն օր նոր նոր ապացոյցներ հաստատում են, որ Թիւրքաց պաշտօնեաները ամեն միջոց գործ են դնում խեղդելու ճշմարտութիւնը և արգելելու կարևոր վկաների ներկայանալը քննիչ յանձնաժողովին։ Տեղական պաշտօնեաների այդ վարմունքը հետևանք է կենտրոնից, այն է Կ. Պոլսից ստացած հրահանգների։ Գործերի վիճակը այնքան անգոհացուցիչ է, որ երեք պետութիւնները հաւանօրէն լուրջ բողոք կը մատուցանեն այդ մասին։»

VII

Ֆրանսիական «National» լրագիրը հաստատում է այն լուրը, թէ մեծ պետութիւնների ներկայացուցիչները հրաւիրել են Բ. Դրան ուշադրութիւնը այն հանգամանքի վրա, որ Փոքր-Ասիայի քրիստոնեաներին վտանգ է սպառնում մահմէտականների կողմից։ Լրագիրը աւելացնում է, որ Դուռը հաղորդել է դեսպաններին, թէ բոլոր նահանգապետներին հրաման է ուղարկված պաշտպանողական միջոցներ ձեռք առնել, որպէս զի մահմէտականները նոր յարձակում չը գործեն հայերի վրա։

ՄԻ ՆՈՐ ՎԱՐՁԿԱՆ ԹՂԹԱԿԻՑ

Գերմանական «Berliner Tagebl.» լրագրի Լօնդոնի թղթակիցը, ինչպէս երևում է, միացաւ այն վարձկանների խմբին, որոնք աւելի են վայելում Թիւրքաց գանձարանի եկամուտները, քան այն թշուառ ժողովուրդը, որ իր քրտինքով լցնում է օսմանեան գանձարանը։ Իբրև նմուշ առաջ ենք բերում նրա մի թղթակցութիւնը Լօնդոնից գրված։ Ահա։

«Լօնդոնի «Daily Telegraph» լրագիրը հրատարակեց մի սարսափելի տեղեկութիւն հայկական կոտորածների մասին, որը նրա թղթակիցը ուղարկել է իբր թէ Մուշից, Կարսի վրայով։

«Ես չը ցանկացայ այդ լուրը հաղորդել, քանի որ ես անձնական կարծիք եմ կազմել հայկական գործունէութեան մասին։ Մի օր, հայկական շարժման սկզբում, մի պարոն, որի տակից յետոյ հայկական կոմիտէի քարտուղարը դուրս եկաւ, ինձ հետ տեսնվեց և հարցրեց, թէ արդեօք իմ թերթին չէ կարող հետաքրքրել հայկական կոտորածների մասին ստացված մի ամենանոր տեղեկութիւն։ Այդ տեղեկութիւնը կարդացվելու էր մօտակայ օրերում կայանալիք մի միտինգում, բայց նա պատրաստ էր մինչև այդ օրը ինձ տալ այդ հետաքրքիր տեղեկութիւնը։

«Բնական է, որ յայտնեցի պարոնին, թէ այդ բանը ինձ շատ է հետաքրքրում և գնացի ներկայացայ հայկական կոմիտէի նախագահ Ստեֆենսոնին, պարլամենտի անդամին և ահա այդպիսով մի գաղափար կազմեցի այդ հռչակաւոր տեղեկութեան մասին, որի մէջ լրատուն հիմնվելով մի տաճկական ժանդարմի ցուցմունքի վրա, ամենանլուր կասկածանքներ էր բարդել Թիւրքաց կառավարութեան վրա։ Բայց ես աւելի կատարեալ գաղափար կազմեցի հայկական ագիտացիայի մասին, երբ ներկայ գտնվելով յիշեալ միտինգում, տեսայ թէ ինչպէս բախտախնդիր մարդիկ ամենաամօթաբար հայհոյում էին Թիւրքաց արդարասէր կառավարութեան։ Մինչև այսօր էլ դեռ չեմ հասկանում, թէ ինչպէս կարող էին մատաղահաս տիկիններ ներկայ լինել և լսել այն զարհուրելի ոճիրների նկարագրութիւնը, որ պատմում էր մի բողոքական հոգևորական միտինգի ժամանակ։

«Այդ փորձերից յետոյ, որոնք չէին կարող ինձ համոզել, որ այստեղի հայերը և նրանց բարեկամները ազնուութեամբ են գործում, այլ ևս կարիք չը զգացի հայկական հարցը լրագրական խնդիր չինել, մանաւանդ որ արդէն քննիչ յանձնաժողով է նշանակված և պէտք է սպասել նրա հետևանքներին։ Նոյն իսկ դէպի «Daily Telegraph» լրագրի հեռագիրները ես անտարբեր մնացի։

«Բայց պահպանողական պատգամաւոր Աշմիդ Բարտլեթը այդ լրագրի հեռագիրը խօսակցութեան առարկայ էր դարձրել պարլամենտի մէջ և պարլամենտականների ուշադրութիւնը հրաւիրել, թէ հեռագրի ժամանակը կասկածանք է յարուցանում՝ չը լինի թէ այդ տեղեկութիւնները հնարովի լինեն։ Այն ժամանակ «Daily Telegraph» սաստիկ վիրաւորված պատասխանեց, որ հեռագիրները ճիշդ են։ Իրաւ է, հեռագիրների ժամանակը իր թղթակիցը չէ որոշել Մուշի մէջ, նրանք ստացված են ռուսաց հեռագրաթելով Կարսից, խմբագրութիւնը ինքն է Մուշից Կարս հասնելու ժամանակը մօտաւորապէս նշանակել և ըստ այնմ հեռագրի ժամանակը որոշել։ Պատգամաւոր Աշմէդ Բարտլեթը իբրև պատասխան մի նամակ ուղարկեց «Daily Telegraph» թերթին, որը սակայն ես չը գտայ այնտեղ տպած. այդ նամակը տպվեց «Pall-Mall Gazette» լրագրում, որը հայկական հարցի մէջ շատ խելացի կերպով՝ չէզոք դիրք է պահպանում։

Ահա այդ նամակը.

«Պարոն։ Ձեր անձնական վիրաւորանքները, որ ուղղված են ինձ դէմ, ես արհամարհում եմ, ինչպէս որ նրանք արժանի են։ Ես կրկնում եմ.— ֆիզիկապէս միանգամայն անկարելի է, որ «Daily Telegraph»-ի մէջ փետրվարի 21-ին տպված և այսօր վերահաստատված լուրը, որը փետրվարի 23-ին Մուշից սուրհանդակի ձեռքով ուղարկված է Կարսի վրայով, կարող լինէր փետրվարի 26-ին Լօնդոն հասնել և տպվել, և այն էլ տարվայ այսպիսի ժամանակում։

«Ես ձեզնից պահանջում եմ, վիճելի հեռագրի իսկական բնագիրը իմ ներկայութեամբ երեք անկախ քննիչների յանձնէք, որոնցից մէկին դուք որոշեցէք, մէկին ես, երրորդին մեր արտաքին գործերի մինիստրութիւնը։ Թէ ինչու համար եմ այս խնդրով այսքան հետաքրքրվում, դրա պատճառը այն է, որ մի անամօթ դաւադրութիւն է սկսված, որը ոտի տակ տալով ճշմարտութիւնը, անխնայ վիրաւորում է Թիւրքիային։ Այդ դաւադրութիւնը գործում է ոչ միայն հայոց հարցի համար, այլ նա ձգտում է տարածել զանազան լուրեր այն մասին, թէ Թիւրքաց կառավարութեան զանազան մասերում՝ Մակեդոնիայում, Սիրիայում և ուրիշ տեղերում անկարգութիւններ են լինում։ Ամեն միջոց ձեռք են առնում, որ Թիւրքիայում ցեղական և կրօնական պատերազմ յարուցանեն և երկրի դէմ օտար արշաւանք առաջ բերեն, որը շատ վնասակար կարող է լինել բրիտանական շահերին։ Ահա այս տեսակէտից այն անձինք, որոնք պատասխանատու են անգլիական թերթերի բռնած ընթացքի համար, պէտք է խիստ զգոյշ լինեն; թէ՛ այն աղբիւրների վերաբերութեամբ, որոնցից նրանք քաղում են, և թէ՛ այն լուրերի իսկութեան մասին, որ նրանք հրատարակում են։

Մենք կարծեցինք, որ կարևոր է Շիֆելդի պատգամաւորի նամակը հաղորդել, որովհետև նա ի (i) կէտը ուղիղ տեղն է դնում (!?) և հայկական հարցը արժանաւոր կերպով է պարզաբանում։

Ո՞վ է «Daily Telegraph» լրագրի լրատուն։ Մի հնչ, թէ մի Թիւրք ժանդարմ, կամ գուցէ արդէն վերև յիշած Թիւրք ժանդարմը։ Նա չէ կարող եւրոպացի լինել, որովհետև ես ձեռքիս ունեմ ամենահաստատ ապացոյցներ, որ Թիւրքիան ոչ մէկին չէ թողնում այդ դէպքերի տեղը ոտք դնել և այդ բանում բացառութիւն չէ անում։ Ուստի «Daily Telegraph» լրագրի թղթակիցը կամ հայ է, կամ այնտեղ ապրող մէկը, դէպի որի լուրերը պէտք է զգուշութեամբ վերաբերվել։ Գերմանական մամուլը ոչ մի կերպ չի համաձայնվի այդ տեսակ բուերի ձուեր իր բոյնի մէջ դնել»։

—

Բարեբաղդաբար, գերմանական մամուլը աւելի լաւ է հասկանում մամուլի պարտքը, և աւելի լաւ է ճանաչում բռնաւոր Թիւրքիան, քան թէ կարծում է Բերլինի լրագրի վարձկան թղթակիցը։ Գերմանական մամուլի ամենալաւ օրգանները վաղուց է բողոք են յարուցել Թիւրքաց անսանձ բռնութիւնների դէմ, և հեռու չէ այն օրը, երբ նոյն իսկ քննիչ յանձնաժողովի պաշտօնական տեղեկութիւնները կապացուցանեն, որ միայն կաշառակեր, ստոր, վարձկան մարդիկ և լրագիրները ընդունակ են ներկայ օրերում պաշտպանել Թիւրքաց գազանութիւնները...

ՀԱՄԻԴԻԵԻ ԶՕՐԱԳՈՒՆԴԸ

—

Հաստատ աղբիւրից մեզ հաղորդում են հետևեալը.

«Թիւրքաց կառավարութիւնը պահանջում է Համիդիէ զինուորներից, որ նրանք ժողովվեն և պատրաստ լինեն։ Բայց Համիդիէները, լսելով այս բանը, բոլորն էլ ցրվել են իրանց բնակավայրերից և փախել են Պարսկաստան կամ Թիւրքիայի միւս նահանգները, տանելով իրանց հետ իրանց զէնքերը։

«Կառավարութեան պահանջին նրանք պատասխանում են, թէ այս երեք տարվայ համար նրանց պէտք է հանէր ռոճիկ, որը չեն ստացել։ Երբ այս ռոճիկը լիովին կը տան նրանց, նրանք էլ կը հպատակվեն կառավարութեան հրամանին։»

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԱՐԲԵՑՈՂՈՒԹԻՒՆԸ ՏԱՐԱԾՎՈՒՄ Է ԳԻՒՂԵՐՈՒՄ, ԹԷ ՈՉ

—

«Մշակի» 26-րդ համարում կարդացինք մի յօդուած «Արբեցողութիւնը գիւղերում» վերնագրով և պարտք ենք համարում մի քանի խօսք ասել այդ հարցի մասին։

Մենք չենք կարող համաձայնվել այն կարծիքի հետ, որը յայտնում է յօդուածագիրը, իբր թէ արբեցողութիւնը սարսափելի կերպով տարածված է Արարատեան գիւղերում, որովհետև, որքան մեզ յայտնի է, արբեցողութիւնը վերջին տարիներս աւելի թուլանում է, քան թէ զարգանում։ Դրանից, կարելի է ասել, խորշում է ամեն մի գիւղացի։ Գինու չափաւոր գործածութիւնը գիւղական շրջաններում տարածված սովորութիւն է։

Եթէ մի քանի անգործ, անբարոյական մարդիկ իրանց ամբողջ օրերը նուիրում են արբեցողութեան,—այդ դեռ ես չէ նշանակում, թէ այդ յատկութիւնը կարելի է վերագրել ամբողջ գիւղական հասարակութեան։

Ապացոյց դրան աւելորդ չենք համարում նկատել հետևեալը։ Նախորդ տարիների օրինակին հետևելով, թէ անցեալ և թէ ներկայ տարին մի քանի գիւղերում մասնաւոր անձինք ցանկութիւն յայտնեցին գինետներ բաց անել, բայց այդ առաջարկութիւնները մեծ ալեկոծի հանդիպեցին հասարակութեան կողմից և զանազան սպառնալիքներ կարդացվեցին այն մարդկանց դէմ, որոնք կը վստահանային այդպիսի «տուն-քանդող» առևտուրի ղեկավար հանդիսանալ։ Այդպիսով ոչ մի գիւղում գինետներ չը բացվեցին։

Յօդուածագիրը, ի միջի այլոց, ասում է. «Համարեա ամեն մարդ օղի է պատրաստում. նրա դառը քրտինքով ձեռք բերած կօպէկները գին են դառնում մի քանի լիտր քիշմիշի, որից օղի է պատրաստվում»։

Այդ լուրը անհիմն է։ Տեղական ոստիկանութեան կողմից տիրող սարսափը սանձահարում է ամեն մի այդպիսի յանդուգն ցանկութիւն. ծածուկ կերպով օղի քաշողները լաւ գիտեն, որ երբէք չեն կարող թագցնել ոստիկանական արթուն աչքերից իրանց այդ քայլը։ Աւելացրէք դրա վրա և այն, որ ակցիզային աստիճանաւորները, անդադար պտտելով գիւղերում, լուրջ հսկողութիւն են անում։

Այդպէս, ուրեմն, մի կողմից՝ Արարատեան գիւղերում արբեցողութիւնը, նոյն իսկ գիւղացիների կամքով, աւելի և աւելի է թուլանում, փոխանակ սաստկանալու, իսկ միւս կողմից օղիի պատրաստելը այնքան դժուար և վտանգաւոր է, որ գիւղացիք, ուզեն չուզեն, ստիպված են ձեռք վերցնել դրանից։

Արբեցողութեան խնդիրը այնքան հետաքրքրական հարց է մեր գիւղական կեանքում, որ ցանկալի է, որ ժողովրդին մօտիկ մարդիկ այդ մասին իրանց կարծիքը յայտնէին։

Ա.

ՄԱՏԵՆԱԳՐՈՒԹԻՒՆ

—

Նորերս 4-րդ հրատարակութեամբ լոյս տեսաւ Գր. Ջանչեանի յայտնի աշխատութիւնը «Մեծ բէֆորմների շրջանից», մի քանի նշանաւոր յաւելուածներով (համալսարանական ինքնավարութիւն, զէմստվո և այլն)։

Այդ գրքի մասին Նրա առաջին հրատարակութեան առիթով «Մշակը» իր կարծիքը արդէն յայտնել է։

Ներկայ հրատարակութիւնը պարունակում է իր մէջ 716 էջ, բացի առաջաբանից և ֆոտոտիպական պատկերներից և արժէ 2 ր. 50 կոպ.։

Գրքի մեծ աջողութեան գաղտնիքը, ինչպէս և առաջին անգամ ասել էինք, պէտք է որոնել Նրա նիւթի կարևորութեան մէջ։ Ալէքսանդր II-ի բէֆորմները Ռուսաստանի պատմութեան ամենալուսաւոր էջերն են կազմում և տակաւին զարմանք են յարուցանում ժամանակակիցների մէջ։

«Журналъ С.-Петерб. Юридич. Общества» խօսելով այդ գրքի նոր հրատարակութեան մասին, մօտաւորապէս հետևեալն է ասում. «Ջանչեանի տաղանդը կարողացաւ առանձին պատկերներով կենդանացնել ընթերցողի առաջ մեծ բէֆորմների լուսաւոր շրջանը. տաղանդաւոր հեղինակի իւրաքանչիւր տողը արտայայտում է Նրա լայն, լուսամիտ հայեացքը, իրերի խոր ըմբռնումը, ջերմագին սէրը դէպի ազնիւը և բարին. Նրա գիտնական և գրական-գեղարուեստական կրթութիւնը հարուստ նիւթ է տալիս գրքի բնագիրը զարդարելու բանաստեղծական մտքի և զգացմունքի փայլուն գոհարներով. ընտիր ոճը, համեմած բանաստեղծներից քաղած կտորներով, սրամիտ բաղդատութիւններով հեղինակի լեզուին գրաւիչ փայլ են տալիս. թերևս մի ուրիշ վէպ աւելի բարդ բովանդակութեամբ և ողբերգական վախճանով չէր կարդացվի այնպիսի մեծ հետաքրքրութեամբ, ինչպէս այդ անկեղծ, լի սաեղծագործական կայծով և կենդանութեամբ էջերը»։

Գիրքը նուիրված է Վ. Բէլինսկիի և Ն. Գրանովսկիի յիշատակին։

ՆԱՄԱԿ ՄՈՍԿՎԱՅԻՑ

—

Մարտի 8-ին

«Նա լոյս էր փնտռում և գտաւ մահ»,—այդպէս կարելի է արտայայտել այն տպաւորութիւնը, որ գործեց ամենքիս վրա Լևոն վարդապետ Խօջայեանի մահվան գոյժը։

Հանգուցեալը շատ բարեկամներ և ծանօթներ ունէր Մոսկվայում։ Ես էլ բախտ ունէի ճանաչելու Նրան։ Բախտ ունէի, ասում եմ, որովհետև միակ անձնաւորութիւնները, որոնց հետ ծանօթ լինելը բախտ և պատիւ պէտք է համարվի, ոչ թէ նրանք են, որ ունեն բարձր աստիճան, ազնուական ծագում կամ մեծ հարստութիւն, այլ այն ամենը, հարուստ թէ աղքատ, բարձրաստիճան թէ անաստիճան, ազնուական և անտոհմիկ, որոնց մէջ ամենապարզ կերպով արտայայտված է մարդկային հոգու աստուածային ծագումը։ Եւ ահա այդպիսի մարդ էր Խօջայեանը իր կարճատև կեանքի զանազան շրջաններում։

Ով յիշում է Լևոն վարդապետին ուսանող ժամանակ, գիտէ, որ Լևոն Խօջայեանը մի ուսանող էր մեղմ ընաւորութեամբ, չափաւոր ուղղութեամբ և օպտիմիստ հայեացքներով։ Մարմնացած հեզութիւն և բարութիւն էր նա։ Կեանքը մտնելուց յետոյ նա պահպանեց իր հոգու հիմնական յատկութիւնները, սրտի ազնուութիւնը և ընաւորութեան մաքրութիւնը, բայց և մի և նոյն ժամանակ մեծ փոփոխութեան ենթարկվեց ուրիշ կողմերից։

Նա դէպք ունեցաւ մի քանի անգամ տեսնվել հանգուցեալի հետ նրա համալսարանն աւարտելուց յետոյ։

Առաջին անգամ Թիֆլիսումն էր այդ։ Նա մի տարի, Մակար կաթողիկոսի ժամանակ, ուսուցչութիւն էր արել Գէորգեան ճեմարանում։ Շատ գոհ էր երևում իր վիճակից։ Ցաճախ կրկնում էր,—«դէթ այսպէս երկար շարունակվէր»։ Նա դեռ չէր փոխվել. նա առաջվան միամիտ օպտիմիստն էր, և կաւելացնենք, միշտ կը մնար այդպէս, եթէ մեր հայկական կեանքը բաւականաներ Նրանով, որ մարդիկ չեն մաքառում կեղտոտութեան դէմ, և չը պահանջէր Նրանցից դրական կեղտոտ գործեր։ Այդ բանին անընդունակ էր հանգուցեալը և այդ պատճառով «երկար չը շարունակվեց» Նրա գոհունակութեան շրջանը։ Մի քանի ամիս անցած՝ այն խումբը, որի ձեռքին միշտ խաղալիք է եղել մեր բարձրագոյն դպրոցը, ուսումնական տարվայ կէսին առանց պատճառի հեռացրեց Նրան պաշտօնից և, կարծես, Նրան օպտիմիստութիւնից վերջնականապէս բժշկելու համար, չը տուեց Նրան՝ Նրան հասնելիք ռոճիկը։

Երկրորդ անգամ մենք տեսնվեցինք այդ դէպքից յետոյ։ Նա արդէն բաւական փոխվել էր։ Նրա հայեացքները ստացել էին աւելի որոշ գոյն, խոսակցութիւնը—մի առանձին շեշտ և երբեմն խիստ տօն. նա հասկացել էր գերմանական առածի ճշմարտութիւնը, թէ չէ կարելի ձուաձեղ եփել առանց ձու ջարդելու։

Երրորդ անգամ, Երեմիա եպիսկոպոսի տեղակալութեան ժամանակ, հանդիպեցինք մենք իրար։ Լևոն Խօջայեանը այժմ արդէն աբեղայ էր։ Այդ Նրա գործունէութեան ամենաեռանդուն շրջանն էր։ Բարձրից հաւատով և սիրով էին վերաբերվում դէպի երիտասարդ կրթված գործիչները, և Լևոն վարդապետը գործում էր հնազանդվելով միայն իր համոզմունքների պահանջներին և իր խղճի ձայնին։ Իսկ այդ համոզմունքները ազնիւ էին և այդ խիղճը՝ մաքուր իբրև բիւրեղ։

Էջմիածնի մթնոլորտը խեղդուկ չէր թվում հանգուցեալին։ Նա ապրում էր մի ուրիշ մթնոլորտում,—հանրամարդկային իդէալների, ազգային իղձերի և վսեմ վշտի մթնոլորտում։ Բայց նա ուզում էր հեռանալ Էջմիածնից։ Նա ուզում էր վանահայր դառնալ Պարսկաստանի աւերված, անեկամուտ Դերիկ վանքին, որ վերջերս այնքան նշանաւոր դարձաւ քրդերի յարձակման շնորհիւ։

Ինչու չը գնաց Լևոն վարդապետը այնտեղ, յայտնի չէ. անկասկած է սակայն, որ անձնուիրութեան պակասութիւնից չէր այդ։

Այնուհետև չը տեսնվեցինք մենք այլ ևս...

Տխուր լուրեր էին ստացվում Էջմիածնից։ Կոպիտ իրականութիւնը հարուած հարուածի յետևից հասցնում էր իդէալիստ վարդապետին։ Շատ վարդագոյն յոյսեր ի դերև էին եղել։ Հեղ և բարի Լևոն վարդապետը կատաղի թշնամութիւն էր գրգռել իր դէմ։ Իր ազնուութեամբ յայտնի Խօջայեանի մասին տարածում էին ամենաանհեթեթ զրպարտութիւններ։

Ասում են, այդ բոլորը սաստիկ ազդել էր հանգուցեալի վրա. ասում են, նա հիասթափված մնաւ։ Անկասկած է, որ հայկական կեանքի աւանդական կեղտը լցրել էր հանգուցեալի սիրտը դառն թախիծով, որ նա հետը տարաւ գերեզման, բայց մեզ անհաւանական է թվում, որ նա հիասթափված լինէր ընդհանուր առմամբ։ Լևոն վարդապետը կռապաշտ չէր. նա այն մարդկանցից չէր, որոնք իրանց իղձերը, յոյսերը և գործերը կապում են այս կամ այն անձնաւորութեան հետ։ Նա ոգևորվում էր միայն գաղափարներով, իսկ այն գաղափարները, որոնց ծառայում էր նա, այժմ աւելի քան երբէք մօտ են իրականանալու։ Այդ գիտէր հանգուցեալը և նա սպասում էր լաւագոյն օրերի։ Նա շատ յոյսեր ունէր և դեռ շատ բան կարող էր անել։ Սակայն մահը և մարդիկ անողոք զանվեցին։ Նա մահ գտաւ, երբ լոյս էր փնտռում, երբ կեանքի էր ծարաւ և սիրոյ արժանի։

Տ. Յովհաննիսեան

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

Մի խումբ հայեր, Թիֆլիսից, շնորհաւորել էին Մատթէոս եպիսկոպոսի պատրիարքական ընտրութիւնը, ցանկանալով Նրան աջողութիւն իր նոր գործունէութեան մէջ։ Իզմիրլեան պատրիարքը մի առանձին գրութեամբ շնորհակալութիւն յայտնելով իրան շնորհաւորողներին, յայտնում է, որ ամեն կերպ աշխատում է կատարել իր պարտքը դէպի ազգը և եկեղեցին։

—

Մեր քաղաքային դումայի իր վերջին նիստում որոշեց նոր քաղաքագլխի ընտրութիւնը կատարել ապրիլի 24-ին։

—

Ամենահաստատ աղբիւրներից նորից մեզ հաղորդում են, որ ամենայն հայոց Կաթողիկոսը կը մնայ Նոր-Նախիջևան մինչև Զատիկ։

—

Մենք արդէն հաղորդեցինք, որ Պարիզում հրատարակվող «New-Iork Herald» լրագրի մէջ տպագրված է Ազարեան պատրիարքի պատկերը։ Հարկաւոր ենք համարում աւելացնել, որ նոյն համարում, որը մենք երէկ ստացանք ամբողջապէս, տպագրված են և ամենայն հայոց Կաթողիկոս Խրիմեանի ու Մատթէոս պատրիարք Իզմիրլեանի պատկերները։

—

Անգլիական պարլամենտի անդամ Աշմէա Բարտլէտ շարունակում է իր թրքամոլութեամբ տխուր հռչակ հանել։ Մենք արդէն հաղորդեցինք, թէ ինչ գեղեցիկ ապտակ ստացաւ նա, երբ կասկած յայտնեց «Daily Telegraph» լրագրի հեռագիրների դէմ։ Այժմ նա շարունակում է իր թրքամոլ ճառերը պարլամենտի նիստերի ժամանակ։ Եւ ինչպէս երևում է «Новое Обозрѣніе» լրագրի թղթակցութիւնից, որ մենք այսօր առաջ ենք բերում,—այնտեղ էլ արժանաւոր նկատողութիւն ստացաւ ժողովի սպիկերի կողմից։

—

Թիֆլիսի հայոց քահանաների դասը մի կորուստ ունեցաւ,—Գէորգ քահանայ Գնունու մահով։ Նրա մահը համարեա յանկարծական էր։ Ներկայ լինելով շաբաթ օր, մարտի 18-ին, Իզմայլեանի թաղմանը, նա այնքան սաստիկ մրսել է, որ մի օրից յետոյ մեռաւ։ Գնունի քահանան մօտ 55 տարեկան էր։ Նա սկզբում քահանայական պաշտօն վարեց Կախեթի, Փոթի և Բուլթայիս, ուր աշխատեց տարածել վրացախօս հայերի մէջ մայրենի լեզուն և վերջին տարիները տեղափոխվեց Թիֆլիս, ս. Գէորգ եկեղեցին։ Այստեղ նա միաժամանակ Թիֆլիսի նահանգական դատարանում երդմնեցնողի պաշտօն էր վարում։—Մեռնելով նա թողել է մեծ ընտանիք և ոչ մի կոպէկ կարողութիւն։

—

Մարտի 18-ին, Թիֆլիսի դատաստանական պալատի դէպարտամենտների ընդհանուր ժողովի դահլիճում համեստ կերպով տօնվեց Ա. Ֆրանցովի ծառայութեան 25-ամեակը, դատաստանական պալատի անդամի պաշտօնում։ Պալատի անդամ Սորելբիցկի մի ճառով շնորհաւորեց յօբելեարին և բոլոր պաշտօնակիցների կողմից անկեղծ երախտագիտութիւն յայտնեց, որ իր ամբողջ պաշտօնավարութեան ժամանակ յօբելեարը օրինակելի և անկեղծ դատաւոր է եղել, նուիրվելով ամբողջապէս արդարադատութեան գործին։ Յօբելեարին մատուցին մի արծաթէ չքեղ սերվիզ։

—

Դերասան Ա. Վրոյր խնդրում է մեզ տպել հետևեալը. «Այսօր, մարտի 23-ին նշանակված «Ագահ» պիէսայի ներկայացումը յետաձգում եմ, խմբի մի քանի անդամների մէջ եղած անբաւականութիւնների պատճառով, որ բոլորովին կապ չունեն իմ ներկայացման հետ»։

—

Երկուշաբթի, մարտի 20-ին, Թիֆլիսի Արտիստիական ընկերութեան դահլիճում, սիրողների մասնակցութեամբ, ներկայացվեց Դիմայի «Քին» դրաման, որ գրաւել էր մեծ հասարակութիւն։ Ներկայացման մասնակցում էր նաև դերասան Դարսկի, որ առաջին անգամ էր բեմ դուրս գալիս Թիֆլիսում և հասարակութեան մեծամասնութիւնը նրան տեսնելու համար էր եկել։ Թէև դժուար է որ և է եզրակացութիւն կազմել մի ներկայացումից, այնու ամենայնիւ երևում էր, որ պարոնը մեծ աշխատանք է գործ դրել իր կրթութեան վրա։ Հասարակութիւնը շատ ջերմ ընդունեց երիտասարդ դերասանին և երեք ընծաներ մատուցեց, որոնցից մէկը արծաթեայ սկուտեղ էր իր բաժակներով, իսկ երկուսը՝ ծաղկեայ պսակներ։

—

Մեզ հեռագրում են Բագուից, մարտի 21-ից. «Կարա-Մուրզայի տասնամեակի կոնցերտը լինելու է շաբաթ, մարտի 25-ին»։

—

Թոյլատրված է Բաթում քաղաքում հրատարակել մի ռուսերէն ամենօրեայ լրագիր, «Черноморскій Вѣстникъ» անունով, խմբագրութեամբ ազնուական Գ. Պալմի։

—

Մայրաքաղաքի լրագիրներին հաղորդում են, որ միջնորդութիւն է սկսված, որով թոյլատրութիւն է խնդրվում մարդանէց արդիւնաբերողների համագումար ժողովներ կազմել Կովկասում։

—

Ի նկատի ունենալով, որ Անդրկովկասի հարաւային սահմանի վրա աւազակային յարձակումներ են տեղի ունենում, մտադրութիւն կայ, մայրաքաղաքի լրագիրների խօսքով, այնտեղ բնակեցնել Դոնի կազակների մի քանի հարիւր ընտանիքներ, տալով նրանց ձրի հողաբաժիններ, սահմանի երկարութեամբ։

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԱՆԳԼԻԱ ԵՒ ԿԻՊՐՈՍ ԿՂԶԻ

—

Նորերս անգլիական համայնքների ժողովում հարց ծագեց, թէ շահաւէտ չէ Անգլիային տիրել Կիպրոս կղզու վրա, և ահա այդ օրից եւրոպական մամուլի մէջ քննվում է այդ հարցը և հաւանական են համարում, որ Անգլիան հրաժարվի այդ կղզուց։

Ինչպէս յայտնի է, 1874 թուի յունիսի 4-ին Թիւրքիայի հետ կապած պայմանագրի զօրութեամբ, որ ստորագրվեց Բերլինի կոնգրէսի գումարվելու նախընթաց օրը, Անգլիան պարտաւորութիւն յանձն առաւ զինւորական օգնութիւն հասցնել Բ. Դրանը, եթէ որ Ռուսաստանը կը յարձակվի Նրա փոքր-ասիական երկիրների վրա, իսկ Թիւրքիան իր կողմից իրաւունք տուեց Անգլիային վերահսկողութիւն ունենալ Հայաստանի Թիւրքաց վարչութեան վրա և տիրել կղզին, պահպանելով միայն Թիւրքաց սուլթանի գերագոյն իշխանութիւնը կղզու վրա և վճարելով Թիւրքիային 92,700 ֆունտ ստերլինգ հարկ։

Սակայն Կիպրոս կղզին տիրելը այնքան շահաւէտ չը դուրս եկաւ, ինչպէս ապացուցանում էր այն ժամանակ լորդ Բիկոնսֆիլդ, որովհետև կղզու վարչութիւնը տարուց տարի բարդ կազմակերպութիւն ստանալով՝ շատ ծախսեր է պահանջում, այն ինչ եկամուտները չեն աւելանում։

Բացի դրանից Կիպրոս կղզին գտնվելով հեռու գլխաւոր ծովային առևտրական ճանապարհից, մինչև անգամ յարմար կայարան չէ անգլիական նաւերի համար։

ՆԱՄԱԿ ԱՒՍՏՐԻԱՅԻՑ

—

Վիէննա, մարտի 10-ին

Այս պօստով ուղարկում եմ ձեզ երկու համար «Reichspost» լրագրի, որի մէջ տպված է մի բանասիրական Սասունի անցքերի մասին։ Այդ բանասիրականը քաղուածօրէն թարգմանված է այն մանրամասն տեղեկագրից, որ երևաց անցեալ տարի «Մշակի» մէջ։

Ցիշեալ «Reichspost» լրագիրը օրգանն է քրիստոնեայ ընկերավարականների, որոցառաջնորդողն է իշխան Լիխտէնշտայն «Lichtenstein), որը պաշտպան է քրիստոնէութեան շահերի և ատող հրէականութեան, որին կը վերագրէ քրիստոնեայ գործաւորների տնտեսական տխուր վիճակը։ Անկասկած այս յօդուածը առանց արդիւնքի պիտի չանցնէ Թիւրքաց հայերի դատին համար, վասն զի «Reichspost» լրագիրը շատ տարածված է քրիստոնեայ ժողովրդի մէջ։

Շնորհակալութեան արժանի է այդ լրագրի մարդասիրական վարմունքը դէպի տառապող Թիւրքահայերը և արիութիւնը, որով նա պարզեց աւստրիացի ժողովրդին Թիւրքերի և քիւրդերի գործ դրած վայրենութիւնները հայոց վրա։

X

ՆԱՄԱԿ ԹԻԻՐՔԻԱՅԻՑ

—

Օրդու, մարտի 12-ին

Տեղւոյս հայ հասարակութիւնը չէ ունեցած երբէք հասարակ շարժումներ՝ ընդդէմ կառավարութեան. հացի խնդիրն չը թոյլատրեր՝ որ խեղճ ժողովուրդն իր ազգային պարտականութեանց հետամուտ լինի։ Մանաւանդ վերջին տարիներս՝ գործոց անյաջողութեան և երկրագործութեան նուազութեան պատճառաւ բոլորովին հացի խնդրով զբաղեալ է։

Նոյն տնտեսական ծանր պատճառներէ ղբրդված խեղճ գիւղացին ստիպեալ է պանդխտել դէպի Կովկաս և կամ այլուրեք. մի քանի ամիսներէ ի վեր պանդխտած են իբր (1000) անձինք, և դեռ ևս կը շարունակեն։

Այս առթիւ թէպէտև անցագրի ծանր արգելքներ կը յարուցուին կառավարութեան և ոստիկանութեան կողմանէ, սակայն խեղճ գիւղացին ամեն զոհողութիւն յանձն առնելով՝ պանդխտութիւնէ չը շեղիր երբէք։ Առաջնորդական փոխանորդն իր շահուն համար իւրաքանչիւր մարդուց մօտ 30—40 դահեկան կառնէ՝ անցագրի վաւե-

բացման համար։ Խնդիրը կը տարբերի այն ատեն՝ երբ ընտանեօք գաղթել հարկ կը լինի խեղճ գիւղացւոյն. այն ատեն 20—30 օսմանեան լիրայ պէտք է, որ վճարեն խեղճ ընտանեաց տէրերն, եթէ ոչ հրաման չի տայ և այն ալ ոստիկանութեան միջոցաւ, քան զի ոստիկանութիւնն արդէն ընկերացած է փոխանորդ հօր հետ՝ այս տեսակ «կաշառի-շահաւէտ» գործերու մէջ։

Այնօրինակ գործերով մեր փոխանորդ հայրն կառավարութեան և ոստիկանութեան պաշտօնէից մեծ քաջալերութիւն կը տայ. ոստիկանութեան մանրախոյզ հսկողութիւնն երբէք չը դադրեր հայ հասարակութեան վրայէ. փոքր պատճառաբանութիւններով՝ անհատներ դատապարտելու կը ջանան, որպէս զի կարենան կաշառներ կորզել անոնցմէ. վերջապէս կաշառակերութեան ամէն միջոցներ խորհելով՝ ակնկառոյց կը սպասեն խեղճ հայ հասարակութեան մէն մի շարժման ու ընթացքին...

Ատ.

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

«Հաւասի գործակալութեանը» Կ. Պոլսից հեռագրում են, որ Ֆրանսիական դեսպանութեան առաջին թարգմանի որդին, 18 տարեկան մի պատանի, երկու անգամ ենթարկվեց յարձակման և վիրաւորանքների թիւրքաց զինուորների կողմից, երբ նա վելօսիպեդով զբօսանքներ էր կատարում Կ. Պոլսի շրջականերում։ Ֆրանսիական դեսպանութիւնը այդ առիթով եռանդուն առաջադրութիւններ արաւ Բ. Դրանը։

ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ

Ամէրիկացի միլիոնատէր Վանդէրբիլդ, որը նորերս Պետերբուրգումն էր գտնվում, ինչպէս լրագիրները հաղորդում են, մտադրութիւն ունի չուտով Թիֆլիս գալ։ Վանդէրբիլդ ութ օր մնաց Պետերբուրգում, և այդ ութ օրվայ ընթացքում 300-ից աւելի նամակներ ստացաւ քաղաքային պոստով և մօտ հարիւր զանազան խնդիրներ։ Եղան այնպիսի անձինք, որոնք խնդրում էին (գրաւոր, ի հարկէ) Վանդէրբիլդից 100 ռուբլուց մինչև 10,000 ռուբլի։ Վանդէրբիլդի անունով ստացվող բոլոր նամակները և խնդիրքները կարդում էր նրա աւագ քարտուղար Լայն և դրանցից ամենահետաքրքիրները նա ցոյց էր տալիս Վանդէրբիլդին։ Ի միջի այլոց, մի խնդիրքի մէջ, որ Ֆրանսերէն լեզուով էր գրված և ուղարկել էր մի տիկին, ասված էր հետեւեալը. «Դուք մի րօպէում 28 դոլլար եկամուտ էք ստանում, որ ռուսաց փողով օրական կը կազմի 80 հազար ռուբլուց աւելի։ Ինչ նշանակութիւն ունի ձեզ համար 3000 ռուբլին. ես ձեզ ազնիւ խօսք եմ տալիս, որ այդ փողը մէկ տարուց յետոյ կը վերադաձնեմ ձեզ Նիւ-Եօրկ։» Վանդէրբիլդը խնդիրք տուողներից ոչ ոքին ոչինչ չը տուեց։ Վանդէրբիլդ շատ քիչ ուշադրութիւն է դարձնում և մագազինների վրա, և հազիւ է պատահում, որ մտնի որ և է մագազին։ Բայց ինչպէս ասում են, նա դիտաւորութիւն ունի շատ բան գնել Մոսկվայում և մանաւանդ Թիֆլիսում, որը նրա ճանապարհորդութեան վերջնակէտն է լինելու Ռուսաստանում։

"ՄՇԱԿԻ" ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՌՈՒՍԱՑ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 21 մարտի։ Նիժեգորոդեան նահանգապետի ամենահպատակ զեկուցման վրա 1894 թւի համար, որի մէջ ասված է, թէ վերջին 10 տարիների ընթացքում սպանութիւնները և աւազակութիւնները աւանդութեան սեփականութիւն են դարձել, տեղի ունեցաւ Բարձրագոյն նկատողութիւն. «Մխիթարական է»։

ԲԵՐԼԻՆ, 20 մարտի։ Այսօր, Բիսմարկի ծննդեան 80-ամեակի օրը, հասարակական և շատ մասնաւոր տներ զարդարված էին։ Ունտէրդէնլինդէնում շատ զբօսնողներ կան. դպրոցներում տեղի ունեցան հանդիսաւոր ակտեր, թատրոններում հանդիսաւոր ներկայացումներ։

ՎԻԵՆՆԱ, 20 մարտի։ Կայսրը ընդունեց բոլգարական մինիստր-նախագահ Սաֆիլովին։

Բիսմարկի ծննդեան օրվայ տօնախմբութիւնը Լինցում և Տրօպաում անկարգութիւններով վերջացաւ։ Լինցում բանւորները խանգարեցին տօնախմբութիւնը աւստրիական ազգային օրհներգի երգեցողութեամբ և «Կորչի Բիսմարկ» աղաղակներով։ Տրօպաում տօնախմբութիւնը դադարեցրեց ոստիկանութիւնը, իշխանութեան կողմից հաստատած ծրագիրը խախտելու համար։

ԿԱԼԿՈՒՏՏԱ, 20 մարտի։ Աւգանական էմիրի որդին գնում է Անգլիա։ Նրան դիմաւորելու համար դէպի աւգանական սահման գնաց հնդկական կառավարութեան ներկայացուցիչը։

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ԲՈՐՍԱ

Մարտի 21-ին

Լօնդոնի վրա 10 ֆունտ արժէ . .	93 ր.	4 կ.
Բերլինի վրա 100 մարկ — . .	45 »	42½ »
Պարիզի վրա 100 ֆրանկ — . .	36 »	81 »
Ոսկի — — արժէ . .	7 »	43 »
Մաքսային կուպօններ — . .	148 »	25 »
Արծաթ — — — . .	— »	— »
Բօրսային դիսկօնտ — . .	5 »	7% »
Պետ. բանկի 5% տօմս 1 շրջանի .	— »	— »
— — — — 2-րդ .	— »	— »
— — — — 3-րդ . .	— »	— »
4% պետական րէնտա	98⅞ »	— »
5% ոսկեայ րէնտա 1894 թ. . . .	164 »	— »
Արևելեան 5% փոխառ. 1-ին շրջ.	— »	— »
— — — 2-րդ —	— »	— »
— — — 3-րդ —	— »	— »
— — — 4-րդ —	— »	— »
Ներքին 5% առաջին փոխառութ.	242 »	— »
— — երկրորդ —	227 »	25 »
5% պետական երկաթուղ. րէնտա.	101⅞ »	— »
4% ներքին փոխառութեան . . .	99⅝ »	— »
4½% գրաւ. թղթ. ազն. կալ. բանկի	101⅝ »	— »
Ազն. կալ. Պետ. բանկի խաղարկութ.		
Գրաւ. թղթ. — — .	214 »	25 »
4½% վկայակ. գիւղ. հող. բանկի.	101⅝ »	— »
4½% գրաւական թղթեր կալուած.	— »	— »
Փոխ. կրեդիտ. ընկեր. մետալ.	149 »	25 »
— — — թղթադ. .	— »	— »
Պետերբուրգի քաղաքային կրեդիտ. ընկերութեան օբլիգացիաները.	101⅝ »	— »
Մոսկվայի քաղաք. օբլիգացիաներ.	101 »	50 »
Օդէսայի — —	100⅜ »	— »
Թիֆլիսի — —	99⅝ »	— »
Գրաւ. թղթ. Թիֆլիսի կալ. բանկի.	101 »	— »
— — Քութայիսի — .	101 »	— »

Խմբագիր՝ ԱԼԷՔՍԱՆԴՐ ՔԱԼԱՆԹԱՐ
Հրատարակիչ՝ Մ. ՄԷԼԻՔ-ԱՂԱՄԱԼԵԱՆ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Լոյս տեսան
ՍԱՐԿ. Ց. ՃՈՒՂՈՒՐԵԱՆԻ
„ՄՈՌԱՑՈՒԱԾ ԱՇԽԱՐՀ"-Ի

Ա. և Բ. գրքերը։ Վաճառվում են կենտրոնական գրավաճառանոցում, Մակար Զըմշկեանի և Ինձ մօտ։

Ա. գիրքը արժէ 60 կոպ. Բ. 50 կ. միասին 1 ռուբլի։ Միմիայն Ա-ից գնողներին հարիւրին զիջվում է 30%, երկրորդին 20%։

Հասցէ՝ Тифлисъ, Николаевская ул., д. Алелова № 10.

Սարկ. Ց. ՃՈՒՂՈՒՐԵԱՆ
(№ 26) 4—6

Ա Զ Դ

ԹԱՒՐԻԶԻ „ԸՆԹԵՐՑԱՍԻՐԱՑ-ԴՐԱԴԱՐԱՆԱԿԱՆ ընկերութեան վարչութիւնը յայտարարում է ի գիտութիւն Թաւրիզի հայ հասարակութեան, որ սոյն 1895 թւի յունվարի 28-ից բաց է անում „Զրի ժողովրդական ընթերցարան", Արամեան դըպրոցի փողոց, տուն Արիստակէս տէր-Օհանեանցի։

Ընթերցարանը բաց է ամենայն օր, երեկոյեան 1½ ժամ մնացած մինչև 1½ ժամ անց (ժամը 3½—6½-ը ըստ եւրոպական) կիրակի և տօն օրերը առաւօտեան դաստ. 4—6 ժամ անց (առաւօտեան ժամը 9—11-ը)։ (№ 17) 3—3

ՎԱՃԱՌՎՈՒՄ Է
ՅԱՐՈՒԹԻՒՆ ԱՐԱՐԱՏԵԱՆԻ ԿԵՂԾԻՔԸ
Պարզեց՝ Ա. Ե. Ս.
ԳԻՆՆ Է 50 ԿՈՊ.

Դիմել այս հասցէով՝ БАКУ. Типографія „Ararat". (№ 30) 5—10

Կենտրոնական գրավաճառանոցում վաճառվում են
ԼԵՒՈՆ ՍԱՐԳՍԵԱՆՑԻ
1. ԱՅՑ ԹԻՒՐՔԱՑ ՀԱՅԱՍՏԱՆԻՆ . 60 կ.
2. ԺՈՂՈՎՐԴԻ ԿՐԹՈՒԹԵԱՆ ԴՈՐԾԸ. 20 կ.
7—10

Տիկին Կատարինէ Գնունի իր որդկերանցով յայտնում է բարեկամներին և ծանօթներին
ԳԷՈՐԳ ՔԱՀԱՆԱՅ ԳՆՈՒՆՈՒ
մահվան մասին։ Հոգեհանգստեան պատարագը տեղի կունենայ ս. Գէորգ եկեղեցում, շաբաթ, մարտի 25-ին։ Յուղարկաւորութիւնը կը լինի հանգուցեալի ընակարանից (Կաթօլիչեսկայա փողոց, տուն Տէր-Ասատուրովի), ուրբաթ, մարտի 24-ին, ցերեկվայ 3 ժամին։ Հոգեհանգիստներ տեղի կունենան ամեն օր, երեկոյեան 7 ժամին։
1—2

„Ольфакторіумъ Нудилинъ"
М. Л. ЖИРМУНСКАГО.

ՄԻԱՅՆ ԽԱՐԲՈՒԽԻ ԴԷՄ բժշկական դեպարտամենտից թոյլատրված
ՕԼՖԱԿՏՕՐԻՈՒՄ ՆՈՒԴԻԼԻՆ
Մ. Լ. ԺԻՐՄՈՒՆՍԿՈՒ
Ծախվում է 40 կոպէկով

Դեղագործական Ապրանքների վաճառման կովկասեան ընկերութեան մէջ՝ Թիֆլիսում։
(№ 22) 8—30

Լոյս տեսաւ
ԵՐԿՐՈՐԴ ՀԱՏՈՐԸ
ԱԼԷՔՍԱՆԴՐ ԵՐԻՑԵԱՆԻ
„ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹԻՒՆԸ ԵՒ ԿՈՎԿԱՍԻ ՀԱՅՔ XIX ԴԱՐՈՒՄ"
ՄԱՍՆ Բ. (1831—1842 թ.)
Կաթողիկոսութիւն Տ. Յովհաննէս VIII Կարբեցւոյ և „Պոլօժէնիէ"

ԳԻՆԸ 2 Ր. Ճանապարհածախսով 2 Ր. 50 Կ.։
Առաջին և երկրորդ հատորները միասին 4 Ր. Ճանապարհածախսով 5 ՌՈՒԲԼԻ։
(№ 30) 5—5

ԿԵԱՆՔԻ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹԻՒՆԸ
ԲԱՐՁՐԱԳՈՅՆ ՀԱՍՏԱՏՎԱԾ 1881 Թ.
„ՌՈՍԻԱ"
Ապահովագրական ընկերութեան մէջ

ՀԻՄՆԱԿԱՆ ԵՒ ՊԱՀԵՍՏԻ ԴՐԱՄԱԳԼՈՒԽՆԵՐ 20,500,000 ՌՈՒԲԼԻ

Ընկերութեան տոկոսաբեր թղթերը պահվում են պետական բանկում։

Օրինակ։ Ընտանիքի հայրը, 34 տարեկան, ապահովագրվում է 5,000 ր., որ պէտք է տրվի կնոջը և երեխաներին անյապաղ մահից յետոյ։ Այդպիսի ապահովագրութեան համար նա վճարում է երեքամսեայ պրէմիա 30 ր. 80 կոպէկ։

Ապահովագրութիւնները ընդունվում են 1000-ից մինչև 100,000 ր. գումարների մէկ անձի կեանքի համար։

Ընկերութիւնը ապահովագրում է առանձին շահաւէտ պայմաններով և արտօնութիւններով հիւանդութեան և աշխատանքին անընդունակ լինելու դէպքում։

Ապահովագրական գումարը տրվում է և մահվան դէպքում տարափոխիկ հիւանդութիւնից, խոլերայից և այլն։

Յունվարի 1-ին 1894 թւի «Росия» ընկերութեան մէջ ապահովագրված էին 28,246 անձինք 75,621,010 ռուբլի դրամագլխի։

Ապահովագրողները մասն ունեն Ընկերութեան եկամուտներից։

Ապահովագրողների դիվիդենտը 1893 թւի համար—12% է։

Ապահովագրութեան համար յայտարարութիւնները ընդունվում են և ամեն տեսակ տեղեկութիւններ հաղորդվում են վարչութեանը Ս. Պետերբուրգում (Большая Морская, սեփական տուն, № 37), ընկերութեան Թիֆլիսի բաժնում (Сергіевская, д. № 6) և ընկերութեան գործակալութիւնների մէջ կայսրութեան բոլոր քաղաքներում։ (№ 85) 11—20

ԿԱԿԱՕ ԲԼՕՕԿԷՐ
ՍՆՆԴԱՐԱՐ ԽՄԻԶՔ (գլխաւոր պահեստը Ռուսաստանի համար „ԵԱՎԱ" Ֆիրմայի մէջ. (С.-Петербургъ, Большая Морская, 38).

Ծախվում է կօլոնիալ և դեղային ապրանքների բոլոր լաւ մագազիններում 1/1, 1/2, 1/4 և 1/8 կիլոգրամանոց թիթեղեայ տուփերի մէջ։

(GRAND PRIX) Բարձրագոյն պարգև Անտվերպէնի համաշխարհային ցուցահանդիսում 1894 թւին։ (№ 151) 17—50

Дозволено цензурою, Тифлисъ, 22 Марта 1895 г. Типографія Канцел. Главнонач. Гражданск. частью на Кавказѣ, Лорисъ-Меликовская ул., д. каз.